

ԱՐԵՎԱՆԻ ՅՈՒՆԻՑԻ

ՀԵՌՆԱՇԽԱՐՀԸ ՏՈԿՈՒՄ է,

1. ՇՈԳ Է, ԵՐԱԾ Է ՈՒ ՀՈԳՈՒ ԿՐԱԿ

Արցախում շոգ է, անտանելի տոթ ու երաշտ: Ստեփանակերտում խմելու ջրի հարցը սոցիալական մեծ պրոբլեմ է: Չուրը տրվում է մեկ-երկու ժամով՝ առավոտները և երեկոյան: Եթե տրվում է: Արդյունաբերական ձեռնարկություններում, տրուանապորտի և կենցաղային օբյեկտներում ջրի կարիք չի գտացվում՝ համատարած, համառ, տևական գործադույն է, որի վերջը չի եռևում... Բայց շոգ ու տապ է նաև մարդկանց հոգում, նրանց առօրյայում ու գործողություններում, նրանց դատողություններում, արտաքուստ հանգիստ, իսկ ներքուստ եռացող կեցվածքում, հավաքներում ու միտինգներում:

Արձակագիր ու լրագրող ընկերոջս 80-ամյա մայրը պատմում է սրտառուց մի պատմություն, հոգվում, ապա կապույտ ծաղկավոր գոգնոցը տառում է աշքերին:

Հարևանութիւն Շուշանը, մի հնքնասեր ու հըպարտ, համեստ ու աշխատասեր արցախուի, կիւվել է հետու:

Ամառն անցնում է, իսկ նրա թոռները դեռ լուիկ ու վարունգ չեն համտենել այս տարի: Տղան ու հարսը երեք ամսից ավելի է, ինչ գործադույն մեջ են, իր ստացած թոշակը 40 ոռոբի է, դրանով են ապրում ընտանիքի վեց անդամները: Հարևանութիւն հավաքում է տաճ եղած-եղած ուտելիքները, (նաև լոլիկ ու վարունգ, կարագ ու մեղր), լցնում է պայուսակը, դրա գրանիկում 200 ոռոբի փող դնում ու տանում հարևանութիւն Շուշանին: 2ի վերցնում, բայց լացում է հողմունքից:

— Ետ չեմ տանի, կվառեմ հենց այստեղ, — սպանում է և հեռանում: Այսպես են ապրում և ապրեցնում իրար հպարտ արցախուիները...

2. «ԿՅԱՆՔԻ ԾԱՆՍՊԱՐՀՆԵՐ»

Բայց մի՞թե արցախյան բերրի հողը դադարել է ծառայելու իր աշխատասեր որդիներին, որտեղ է այս հարուստ երկրամասի հոշակավոր բանջարեղենը: Անզամ երաշտի պայմաններում կոլտրնեւությունների ու պետունեւությունների, կոռպարատիվների ու սեփական բանջարանցները պայքում են առատությունից: Արցախում անձու է կարտոֆիլի ու սոխի, լոլիկի ու կաղամբի, լոռու և մյուս բանջարեղենների առատ բերք: Պարզապես դժվար է այդ բերքը դաշտից շուկա ու խանութ հասցնել: Բանջարեղեն բերող յուրաքանչյուր պատուելենա պետք է մարզի կենտրոն և շրջկենտրոններ հասնի... տանկերի ուղեկցությամբ:

ՀԱՅԱՀԱՐԴ

ՄԱՔԱՐՈՒՄ ՈՒ...ՀԱՎԱՏՈՒՄ

Բոլոր ճանապարհները փտանգավոր են, ամենուրեք վիստում են զինված ավագակախմբեր, որոնք քարով ու մահակով, նաև հրազենով հարձակվում են ավտոմեքենաների ու մարդկանց վրա: Ստեփանակերտ եկող ճանապարհին, Լաշինում, ի՞նչ արգելքներ ասես, որ չեն հայրահարել նրանք քարարեկորներ ու հարձակումներ, շրջափակումներ ու սպանալիքներ: Իսկ վերջին մերենայի վրա ճանապարհի ավագակախմբը թողել են իրենց վայրենի «այցելումները» շարդված ապակիներ ու խցիկ, ծակված ավտոդող ու... գնդակների հետքեր: Գնդակ էր խրվել նաև այլուրի պարկի «կողը»: Նման հացը ո՞նց կմոռացվի, նման օգնությունը, ո՞նց կոշել սովորական: Այսպես են ապրում և ապրեցնում իրար հայերը՝ որտեղ է որ լինեն...

Օղակված Լենինգրադին մթերք հասցնող միակ ճանապարհի «կյանքի ճանապարհ» էր կոչվում: Բայց դա պատերազմի տարիներին էր, օղակել էին ֆաշիստները, նրանց կարելի էր ոչնչացնել և ոչնչացնում էին: Ու դա նորմալ էր համարվում: Իսկ արցախին իրավունք չունի իրեն գրկողին, օղակողին պատասխանելու նույն միջոցներով ու եղանակներով: Նրան խանգարում է... նրան պաշտպանելու համար այստեղ բերված զորամասը, ինչպես այստեղ ասում են՝ «12-րդ բանակը» (երկրամասն ազատագրած 11-րդ կարմիր բանակի հմանությամբ)...

Բայց և ամսպես, դժվարությամբ, իհարկե, բանում են արցախյաց «կյանքի ճանապարհները»: Գյուղերից մերենաները քաղաք ու շրջկենսուրն են հասցնում արցախյան հողի բերքը, որի մի մասը բնակիներին են բաժանում անվճար: Իսկ ՃԱՐՏԱՐ գյուղից լոլիկ վաճառողները գնված ապրանքի հետ միասին գնորդին են տալիս նաև... բոնի երկու թարս բոքն, անվճար...

Այսպես են ապրում և իրար ապրեցնում հըպարտ արցախիները...

3. ԶԱՎԱԽՔԸ ԱՐՑԱԽԻՆ

Որքան է ուզեն շրջափակել, խեղացնել արծվարույն այս բերդաշարին, չի հաջողվի, չի ըստացվի: Արցախը կապված է մայր Հայաստանի հետ, աշխարհասկյուր իր զավակների հետ: Ֆրանսիայի ճշանավոր բժիշկ, որդուող-վիրաբույժ Գևորգ Կեպենեկյանը Արցախ եկավ ընդամենը երկու օրով: Բայց այդ երկու օրն էր բավական եղավ, որ նա կատարել մի բանի վիրահատություն, մասնակցել բաղաբային բազմահազարանց միտինգին և յենաշխարհից հեռանար նրան սիրահարված ու որդեգրված, նրան օգնելու մեծ ծրագրով ու ցանկություններով լեցուն:

Իսկ Ստեփանակերտի կուսքաղկումի շենքի առջև հավաքված հայրարավոր մարդկանց տարրային ցոյցն այլ կերպ չեն անվանի, քանի սրբատառություն, ցեցող: Այս «նվիրված էր» շրջափակման օդակը հաջողությամբ ճեղքած հերթական ավտոշրապայան ժամանմանը: Շարայտնը բերել էր

եղբայրական Վրաստանի հայաբնակ վայրերից մարդկանց հանգանակած օգնությունը, իսկ ամենից առաջ նրանց մեծ համակրանքը, սրտերի ջերմությունը: Բոլոր մերենաների ճակատներին հայկական եռագույն դրոշն է ու «Զավախքը՝ Արցախին» պատառը: Մարդիկ ոչ միայն հոգնած ու փոշոտ են, այլև հոգված ու տագնապած: Գորիսից Ստեփանակերտ եկող ճանապարհին, Լաշինում, ի՞նչ արգելքներ ասես, որ չեն հայրահարել նրանք քարարեկորներ ու հարձակումներ, շրջափակումներ ու սպանալիքներ: Իսկ վերջին մերենայի վրա ճանապարհի ավագակախմբը թողել են իրենց վայրենի «այցելումները» շարդված ապակիներ ու խցիկ, ծակված ավտոդող ու... գնդակների հետքեր: Գնդակ էր խրվել նաև այլուրի պարկի «կողը»: Նման հացը ո՞նց կմոռացվի, նման օգնությունը, ո՞նց կոշել սովորական: Այսպես են ապրում և ապրեցնում իրար հայերը՝ որ լինեն...

4. ԱՆԿԵՂԾ «ՀԱՐՑԱՋՐՈՒՅՅ» ԽՈՒՍ ՍՊԱՅԻ ՀԵՏ

«Ղարաբաղ» հուրանոցում իմ հարևաններից մեկը ներքին ծառայության զորամասերի բարձրաստիճան մի սպա էր: Որքան էլ ուզում էի զրուցի բրնձել հետով՝ չեր ստացվում, որևէ պատրվակով կամ բացահայտութեն խուսափում էր: Վերջապես կացած մեր անկեղծ «հարցազրույցը», որի գըլուխ գալը մի շարք կարևոր գործուների հետ էր կապված (ուստի ծողովրդի պատության ու մշակույթի վերաբերյալ իմ գիտելիքները, սպայական համարյա նույն կոշումը, շախմատի նկատմամբ սերը): Ես զարմանքից ու զարդույթից քարացա, երբ նա ոչ այս ոչ այն միանգամբից և անկեղծորեն հայտարարեց:

— Մեզ հարմայված չէ պաշտպանել ձեզ:

— Բայց չէ՝ որ նրանք հարձակվում են, նըռանք կարել են ճանապարհները, չարդում են մեր մերենաները:

— Զգիտեմ:

Պարզվում է, որ նա չգիտեր շատ այլ բաներ ևս: Օթենակ, նա պարզ ասում էր, որ զրբերը ի վիճակի չեն պաշտպանելու խաղաղ բնակչության մասին, շախմատի պատության ու մշակույթի վերաբերյալ իմ գիտելիքները, սպայական համարյա նույն կոշումը, շախմատի նկատմամբ սերը): Ես զարմանքից ու զարդույթից քարացա, երբ նա ոչ այս ոչ այն միանգամբից և անկեղծորեն հայտարարեց:

— Դուք պետք է հույսների ձեզ վրա դներ, ասում էր իմ անկեղծ զրուցակիցը:— Դուք ևս արեք այն, ինչ անում են նրանք...

Ցակը, ուստի սպաս չգիտեր նաև այն, թե ինչու զինվորի վրա կրակողին նախա պետք է ող կրակելով զգուշացնել, ապա նոր միայն հանցանակը գործի վրա կրակել, որպեսզի նա հասցնի կամ սպասել... Ինչպես եղել է շատ անգամ:

5. ՈՐՏԵՂ Է ՀԵՐՈՍԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով Հայկական ՇՈՒԾԻ քաղաքում կանգնեցված էր ամբողջ Կովկասում խորհրդային Միության կրկնակի 2 հերոսներից մեկի (մյուսը նոյնպես հայ ժողովրդի զավակ է՝ Հովհաննես Բաղրամյանը), ՆԵԼՍՈՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ բրոնզե կիսանդրին: Հիմա այն չկա: Ոչ ոք չգիտե, թե ո՞վ է հանել, թե որտեղ է հիմա: Իրողությունն այն է, որ արձանի տեղը հողին է հավասարեցված և կանաչ ցանած: Դե արի ու հավատա, որ այդ քաղաքում խորհրդային իշխանություն կա: Եթե կա, ապա որտեղ է այն: Դե արի ու մի զարմացիր, թե օրը ցերեկով, մի ամբողջ զորամասի առկայության պայմաններում ինչպես է «չքացել» հերոսի կիսանդրին, այն հերոսի, որին օտարերկրյա պատվիրատունների մոտ աղբեջանցիները անամոթաբար տարիներ շարունակ ներկայացրել են որպես աղբեջանական ժողովրդի զավակ: Ծիշտ և ճիշտ այնպես, ինչպես ներկայացրել են «աղբեջանական ժողովրդի զավակ» ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆԻՆ:

Այսօր նոյն ճակատագրին է արժանացել Բաղրամյանի կիսանդրին Կիրովաբադում և մարշալի տուն-թանգարանը Չարդախլուում: Ու նորից զորքերի առկայության պայմաններում: Տարօրինակ է, որ բանակը չի կարող պահպանել իր անունն ու փառքը վեր հանող, իր մարտական ավանդույթները մարմնավորող մարտիկների հիշատակը: Էլ ո՞րն է զորամասի այդտեղ գտնվելու իմաստը: Իսկ Ստեփանակերտում ես տեսա Սամեդ Վոլոդունի անվան անխաթար ցուցանակները: Եկ ու մի զարանա: Չրջապատի բոլորանվեր վանդալիզմին ի պատախան՝ «քրիստոնեական գթասրտություն»:

6. ՍՄԱՐԱՍԻՑ՝ «ԱՄԱՐԱՍ»

Արցախյան պատմա-ճարտարապետական ամենահին հուշարձաններից մեկը՝ ԱՄԱՐԱՍԸ, գրդ դարից ի վեր շոշափակումներ, ավերումներ, ասպատակումներ շատ է տեսել: Հրոսակները եկել են ու անցել, սա մնացել է կանգուն, անսասան, մնացել է «հավերժի ճամփորդ»: Վերջին տասնամյակներին նրա կյանքն անհետաքրքիր, անհմաստ էր դարձել: ՍՈՍ գյուղի կողտնտեսությունը եթե պահակ էր պահում այնտեղ, միայն ու միայն մթերային պահեստ դարձած եկեղեցու համար: Վանքը դադարել էր վանք լինելոց: Եկ ահա վերականգնված է նրա նախասկըզբնական էությունը: Մեկ պահակի փոխարեն մի քանիսն են, և հսկում-պահպանում են ոչ միայն պահեստները, այլև վանքի ամեն մի խաչքարն ու մասունքը, նրա խնկաբույրն ու մոմահոտը: Իսկ վանքը կանաչ ժապավենով օղակած թթաստանների կողքին վերջերս ավելացել են նաև Երևանից գնացած հայ ուսանողների տնկած հարյուրավոր ընկույզների մատղաշ շարքերը, որոնք համերաշխորեն արմատակալել են:

Արցախում հիմա հայտնի է նաև մեկ այլ Ամարաս: Դա «Ամարաս» բարեգործական ընկերությունն է՝ այսօր մարզի բնակչությանը նյութական օգնություն ցուց տվող միակ իրական կազմակերպությունը: Նրա գնած միկրոավտոբուսները հասարակական տրանսպորտից և անգամ տաքսի-

ներից զրկված Ստեփանակերտի բնակիչներին ըսպասարկում են օրնիբուն, անդադար, սպասարկում են անվճար:

7. ԱՆՁԱՏՈՒՄ, ԹԵՇ ՄԻԱՑՈՒՄ

Արցախյան շարժման որոշ պահերի ծնվեց «անջատում» կոչը: Եվ դա բնական էր. եթե առաջմ միանալ անհնար է, գոնե քող լինի անջատում: Անջատում Աղբեջանական ԽՍՀ-ից: Հիմա միտինգներից ու ժողովներից, ամեն տեսակի հավաքներից ու առօրյա զրուցներից անհետացել է այդ կոչ-նշանաբանը: Վերացել է ոչ թե կամայականորեն, ինչ-որ մեկի հրամանով կամ աջակցությամբ, այլ կյանքի, իրադարձությունների բընական ընթացքով: Ի՞նչ անջատման մասին կարող է խոսք լինել, եթե ոչ մի կապ չկա: Ո՞ւմից անջատվել, եթե նա ինքն է անջատել ոչ միայն նրանից, այլև բոլորից. անջատել է Սումգայիթով, Կիրովաբադով, Խոջալուով, իր այսօրվա վայրի պահվածքով: Ո՞ւմ հետ ունեցած կապերը է կտրել, եթե ինքն է կտրել այդ կապերը: Եվ ոչ միայն կապերը, այլև ճանապարհները, կենսականորեն անհածեցտ բոլոր հարաբերությունները, անգամ հայ մարդկանց ձեռքով կառուցած հայկական գյուղի աղբյուրների ջրերը: Անջատումն արդեն ինքնըստինքյան վաղուց է եղել: ԵՎ ՄՆԱՅԵԼ Է ՄԻԱՅՆ «ՄԻԱՅՈՒՄ» նշանաբանը: Այն թևածում է ամենուր՝ թերթերի էջերում և ոադիո ու հեռուստատեսային հաղորդումներում, միտինգներում ու հավաքներում, դաշտերում ու այգիներում, մանկական խաղահրապարակներում:

Իսկ «Ղարաբաղ» հյուրանոցի արդեն մեկ տարվա «բնակիչ», Շուշիից արտաքսվածներից մեկի տասնամյա «Ռաշի» երեխան (նրա իսկական անունը շատ քերը գիտեն) հյուրանոցի բոլոր այցելուներին դիմում է 20 կոպեկի օգնության իրներանքով:

— Ինչի՞ն է պետք փողը, պաղպաղակի համար...

— Ոչ, պետք է մեծ դանակ առնեմ, որ ինձ պաշտպանեմ, եթե Շուշիի աղբեջանցիները նորից փորձեն դիպչել մորս և ինձ...

Այդպես են ապրում և ապրեցնում իրար հինավոր Արցախի հայկազուն, քաջակորով զավակները...

ՄՈՒՇԵՂ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՅԱՆ-ԵՐԵՎԱՆ

